Օժտում

Կարդացեք հետևյալ տեղեկությունները, որոնք գտնվում են temples.ChurchofJesusChrist.org կայքում՝ փնտրելով հետևյալ հարցի պատասխանները.

- Ինչպե՞ս եմ ես օրհնվում Տիրոջ կողմից, երբ ստանում եմ իմ օժտումը:

Երբ դուք միանում եք Եկեղեցուն, ստանում եք երկու արարողություն՝ մկրտություն և հաստատում: Նմանապես, տաճարային օժտումը ստացվում երկու մասով:

Առաջին մասում դուք անձնապես և անհատականորեն կստանաք «նախնական» կոչվող արարողությունները: Այս արարողությունները ներառում են հատուկ օրհնություններ՝ կապված ձեր աստվածային ժառանգության և ներուժի հետ: Այս արարողությունների ընթացքում ձեզ նաև կթույլատրվի կրել տաճարային սուրբ հանդերձները:

Երկրորդ մասում դուք կստանաք ձեր օժտման մնացած մասը՝ խմբային միջավայրում: Դա տեղի է ունենում ուսուցման սենյակում՝ այլ մարդկանց հետ, որոնք հաճախում են տաճար: Ներկայացվում են իրադարձություններ, որոնք փրկության ծրագրի մաս են կազմում: Դրանք են՝ Արարումը, Ադամի և Եվայի Անկումը, Հիսուս Քրիստոսի Քավությունը, Ուրացությունը և Վերականգնումը: Դուք նաև ավելին կիմանաք այն մասին, թե ինչպես կարող են բոլոր մարդիկ վերադառնալ Տիրոջ ներկայություն: Օժտման մի մասը ներկայացվում է տեսանյութի միջոցով, իսկ մի մասը՝ տաճարի սպասավորների կողմից:

Օժտման արարողության ժամանակ ձեզ կհրավիրեն որոշակի ուխտեր կապել Աստծո հետ: Այդ ուխտերը ներառում են.

- Հնազանդության օրենքը, որը նշանակում է ձգտել պահել Աստծո պատվիրանները
- Զոհաբերության օրենքը, որը նշանակում է անել հնարավոր ամեն բան՝ աջակցելու Տիրոջ աշխատանքին և ապաշխարել կոտրված սրտով և փշրված հոգով
- Ավետարանի օրենքը, որը բարձրագույն օրենքն է, որ Նա ուսուցանեց, երբ երկրի վրա էր
- Մաքրաբարոյության օրենքը, որը նշանակում է, որ սեռական հարաբերություններ ունենանք միայն այն մարդու հետ, ում հետ իրավական և օրինական կերպով ամուսնացած ենք Աստծո օրենքի համաձայն
- Նվիրաբերման օրենքը, որը նշանակում է, որ մենք նվիրագործում ենք մեր ժամանակը, տաղանդները և այն ամենը, ինչով Տերն օրհնել է մեզ՝ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա կառուցելու համար

Երբ դուք պահում եք ձեր ուխտերը, դուք ավելի եք մոտենում Փրկչին, և ձեր հարաբերությունները Նրա հետ ավելի զորեղ են դառնում: Աստված խոստանում է, որ նրանք, ովքեր պահում են իրենց ուխտերը, կստանան օրհնություններ այս կյանքում և հնարավորություն՝ վերադառնալու և ընդմիշտ ապրելու Իր հետ:

Օժտման ավարտին մասնակիցները խորհրդանշական կերպով վերադառնում են Տիրոջ ներկայություն՝ մտնելով սելեստիալ սենյակ: Այնտեղ կարող եք ժամանակ տրամադրել խորհելու, աղոթելու, սուրբ գրությունները կարդալու, ինչպես նաև ձեր մտքերը ընտանիքի և ընկերների հետ հանգիստ կիսելու համար: Դա խաղաղության վայր է, որտեղ դուք կարող եք գտնել նաև մխիթարություն և աստվածային առաջնորդություն: (Տես «About the Temple Endowment» temples.ChurchofJesusChrist.org:)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_432-1